

ՄԵԼԻ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Անաստասիա Միխայլովնա Թումանովա-Մէրէթէլի, ելեւա եւ Ակակի Մէրէթէլիները
խորին վշտով յայտնում են ազգականներին եւ ծանօթներին առաջինը՝ իր թանգագին
ամուսնու, իսկ երկրորդները իրանց անմուսնայի հօր՝

ԳԻՐԳՐԻ ԵՖԻՄԻՉ ԾԵՐԵԹԵԼԻ

մահվան մասին: Ամբիճը կը կատարվի ամեն օր ցերեկվայ 12 ժամին եւ երեկոյան 7
ժամին: Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի օր, յունվարի 16-ին, (իր սե-
փական անից Արտ. Գ., № 5) դէպի Քաջլէթի եկեղեցին եւ այնտեղից Դիզուբէի գերեզ-
մանատունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արդեօք տեղափոխվիլ գիւղերը. Գէօրգի Մե-
րէթէլի.—Ներհին ՏԵՄՈՒԹԻՒՆ. Մամուլ:
Գլխաւոր Մամուլագործ Նիստը. Երկրաշարժից
վնասվածների օգտին. Նամակ Դերէնախից:
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր:
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՄՈՒԹԻՒՆ. Բաղիւս. Նա-
մակ Շիշմախից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱ-
ԳԻՐԵՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Եւրօպական մտքից եւ գրականու-
թիւնից:

ԱՐԴԵՕՔ ՏԵՂԱՓՈՒՆՎԻՆ ԳԻՐԳՐԵՐԸ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Ա-
խալալաբի գաւառի երկրաշարժը առաջ
է բերել մի հիմնական հարց, թէ արդեօք
պէտք է թողնել քանդված գիւղերը իրանց
տեղերում, թէ նրանց պէտք է տեղափո-
խել այնպիսի շրջաններ, որոնք ազատ են
երկրաշարժի աւերիչ ազդեցութիւնից: Այդ
հարցը դեռ մանրամասն ընտելութեան առ-
արկայ չէ եղել եւ վերջնական լուծում չէ
ստացել: Երկրաշարժի դործած անմիջա-
կան տուգաւորութեան տակ թէ՛ իրանք
գիւղացիները եւ թէ՛ վարչական անձինք
ցանկալի է անհրաժեշտ էին համարում
գիւղերի տեղափոխութիւնը: Երկրի անվերջ
ցնցումները, շարունակվող սարսափը եւ տան-
ջված ջրերի նորատուր գրգռումները թելա-
գրում էին գիւղացիներին մի յուսահատա-
կան վճիռ.—թողնել պատուհաս դարձած
օջախները եւ դնել մի ուրիշ յարմար եւ

ընդարձակ տեղ բնակութիւն հաստատելու
եւ նորից տնտեսութիւն կազմակերպելու:
Սակայն մի այդպիսի տեղափոխութիւն
կատարելը շատ դժուար հարց է եւ նրան
կարելի է թողնել միայն այն ժամանակ,
երբ երկրաշարժը յիշաւ ստացել է ծայ-
րայեղ արտայայտութիւն եւ այլ եւս յոյս
չը կայ, որ երկրի շուտով վերականգնա-
յիլ նախկին անդորր վիճակին: Աւստի նախ
է առաջ խնդիր է ծագում, թէ արդեօք
երկրաշարժը պէ՞տք է ունենայ աւելի ըն-
դարձակ ծաւալ եւ պէ՞տք է նա շարունակ-
վի ուժեղ կերպով թէ ոչ: Անշուշտ ոչ դե-
մադարեւ լինել չէ կարող եւ չի վստահա-
նայ ապագայ գէպերի գիտող հանդիսա-
յւր կայ, որ երկրաշարժը պէտք է շարու-
նակել իր սարսափները: Արարատի մեծ եր-
կրաշարժից յետոյ, որի ժամանակ կործանվեց
է հողի տակ թաղվեց բազմամարդ Ակոռի
գիւղը, դեռ մի ամբողջ ամիս զգացվում
էին ստորերկրեայ ցնցումներ, բայց յետոյ
ամեն ինչ հանգստացաւ եւ այնուհետեւ
տեղի չէ ունեցել երկրաշարժի լուրջ աւեր-
մունք: Արարատեան դաշտում:

Պէտք է ենթադրել, որ Ախալալաբի գաւա-
ռը անվերջ դատապարտված է երկրաշարժի
սարսափներին եւ շուտով նա կը վերա-
դառնայ իր նախկին վիճակին: Յամենայն
դէպս այնտեղ դեռ շատ ուրիշ գիւղեր
կան, որոնք մնում են իրանց տեղերում:
Գէօրգի Վէրէր յայտնում է այն կարծիքը,

որ երկրաշարժի կրկնութեան սպառնալիքը
դեռ բաւական չէ տեղափոխվելու համար:
Նապօնիայում եւ ուրիշ երկրներում յայ-
տնի են տեղեր, ուր յաճախ պատահում են
երկրաշարժի ցնցումներ, բայց բնակիչները
մնում են նոյն տեղերում եւ միայն յարմա-
րեցնում են իրանց բնակարանները մաքա-
ռելու երկրաշարժի քմահաճոյքների դէմ:
Սենք մի առանձին հեշտութեամբ կը
հակվէինք դէպի գիւղերի տեղափոխու-
թիւնը նոր տեղեր՝ եթէ համոզված լի-
նէինք, որ գիւղերի տեղափոխութիւնը կա-
րող է արդարեւ շատ նպատակաշարժար
կերպով իրագործվել եւ տայ ազգայնակու-
թեան աւելի լաւ կեցութիւն: Բայց այդ-
պէս չէ: Այդ գիւղերը շուտով չեն կարող
բաւականաւոր ընդարձակ հողեր ստանալ
եւ գուցէ ստիպված լինեն ցրվել զանազան
գիւղեր, որոնք հազիւ թէ ուրախ լինեն նոր
հարեաների աւելանալուն: Ամեն տեղ հո-
ղի պակասութիւն է զգացվում, եւ ոչ ոք
ուրախ չի լինի նոր բնակիչների գալուն:

Ստիպված մնում է փորձել նոյն գիւղե-
րում յարմարեցնել տները եւ տնտեսութիւնը
բացառիկ դէպքերի համար եւ այդպիսով
մարդկանց ապահովել վտանգից: Գիւղերի
համար կարելի է ընտրել նոյն համայնա-
կան հողերի վրա աւելի ապահով տեղե-
րից եւ որ գլխաւորն է տները շինել նոր
եղանակով, օգտվելով երկրաշարժին են-
թարկված երկրի տեղի փորձերից: Միայն
պէտք է շտապել տների նպատակաշարժար
տիպը մշակել որքան կարելի է շուտաւիթ
կերպով: Գարունը մօտ է եւ գործելու ժա-
մանակը շուտով կը հասնի:

ԳԻՐԳՐԻ ՄԵՐԵԹԵԼԻ

Գէօրգի Մէրէթէլի վրայ՝ գրականութեան
մէջ պատկանելի տեղ էր բռնում իր ուղղու-
թեամբ, գործունէութեամբ եւ լայն հայեացք-
ներով: Շատ դժուար է վրացիների մէջ գտնել
մի մարդ, որ այնքան օգուտ տուած լինի իր
մայրենի գրականութեան, հրապարակախոսու-

թեան եւ մանաւանդ նոր սերունդի կրթու-
թեան, որքան հանգուցեալը:

Նա ծնվեց 1842 թ. Շորապան գաւառի Գո-
րիս գիւղում: Միջնակարգ կրթութիւնը աւար-
տելով Քութայիսի գիմնազիայում, մանում է
Պետերբուրգի համալսարանի բնական գիտու-
թիւնների ֆակուլտետը: Ուսանող ժամանակ,
1862 թ.ին, նա թղթակցում էր Իվանէ Կերե-
սկիձէի խմբագրութեամբ լոյս տեսնող «Յիս-
կարի» (Արշալոյս) ամսագրին «Էքզիլիւթիւն»
ստորագրութեամբ եւ առաջին անգամից գրա-
ւում է վրացիների ուշադրութիւնը: 1863 թ.
գալիս է Վրաստան եւ նուիրվում է գրակա-
նութեան, աշխատելով ջախջախել վրացիների
մէջ տիրող կղերական եւ չօվինիստական ուղ-
ղութիւնը: Անա այդ նպատակով նա հրատա-
րակում է «Պրօէթա» (Ժամանակ) օրաթերթը,
երեք տարի շարունակ անգաղար գործելով եւ
իր շուրջը ժողովելով մի խումբ երիտասարդ-
ներ, զեկավարում է նրանց: 1868 թ. «Պրօէ-
թան» յանձնում է Ս. Մէսիսին, իսկ ինքը
սկսում է հրատարակել «Գիւղական լրագիր»:
1871 թ. հրատարակում է իր խմբագրու-
թեամբ «Կրէբուլի» (Ժողովածու) ամսագիրը,
որի առաջնորդող յօդուածները հիացնում էին
ամենքին: Մի տարուց յետոյ «Կրէբուլին» յան-
ձնում է պ. Լօրթքիֆանիձէին, իսկ «Գիւղա-
կան լրագիրը» պ. Ումիկաշվիլին: Եւ ինքը
գնում է արտասահման, որտեղ լաւ ուսումնա-
սիրելով ֆրանսերէն ու գերմաներէնը, վերա-
դառնում է Վրաստան եւ սկսում է աշխատակ-
ցել «Պրօէթային», տեղական ռուս լրագիրնե-
րին, Պետերբուրգի «Голосъ»-ին եւ վրաց ման-
կական ամսագիր «Ջէլիլին»:

Հանգուցեալը շատ լաւ գիտէր վրաց պատ-
մութիւնը, լեզուն ու հնարասութիւնը եւ հա-
մարվում էր Մօսկվայի Հնարասական ընկերու-
թեան անդամ: Նա վիպասան էր եւ բանաս-
տեղծ: Նրա բանաստեղծութիւններից յայտնի
են «Մարդ-Առիւծ» եւ «Արանկայ» հիւնային
պօէմները, իսկ վէպերից յայտնի են «Մեր
ժամանակի ծաղիկը», «Ձիւղիկա եւ Կոզարգի-
կա», «Մամիգա Առաքիլ», «Մոխրագոյն գայլ»,
«Մեր հին հերոսները», եւ այլն: Ընդհանրա-
պէս հանգուցեալի գրականական արտադրու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՏՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

XIX դ ար

Մեքենաների դարը նոր երջանութեան, նոր
բախտի արշալոյս պէտք է բաց անէր. բայց պատ-
մական մի անժխտելի իրողութիւն է, որ կուլ-
տուրական համարեա ամեն մի ուժեղ եւ ներ-
գործական հասանք իր գրական կողմերի հետ
միասին դժբախտաբար առաջ է բերում եւ
բացասական հետեւանքներ:

Սկզբում անմուտնչ, բայց հետզհետէ ահա-
րկու եւ սրտաճնիկ աղաղակներ են լսվում եր-
ջանութեան օրհներգների հետ միասին. մարդ-
կային ուղեղի ծնունդը, մեքենան՝ մարդկու-
թեան մի աչքի ընկնող մասը գերել, ստրկա-
ցել է եւ թշուառութեան ու գրկանքի մի սոս-
կալի աղբիւր է դարձել: Գործարանները, մարդ-
կային նոր կուլտուրայի այս նուիրական տա-
ճարները կարծես անկեղծանքներ եւ հիւսնդա-
նոցներ լինեն. զուարթ արտայայտութեան, ա-
ռողջ կազմուածքի, ջրուտ բազումների փոխա-
րէն՝ նիհար, հիւսնդոտ, դալկացած դէմքեր,
հայմանդամներ, թորախոտաւորներ եւ:

Զուրկ լոյսից եւ օդից, ծխի եւ չոգու ամպերի
մէջ թաղված՝ թշուառ բանուոր, այս կենդա-
նի էակը՝ դարձել է մի փոքրիկ մեքենայ
մեծ մեքենայի առաջ, եւ ինչպիսի աշխատու-
թիւն—միօրինակ, մաշող, տաղալիւր... Այն
վաղմի դաւանանքը թէ աշխատութիւնը բախ-
տաւորութիւն է—ծաղր է թուում նրա աչքին:
Դա մի նշույլ է, տանջանք եւ մի ճնշող բեռ,
որ ծանրացած է նրա ուսերին եւ որից նա

ոչ մի պտուղ եւ ոչ մի արդիւնք չէ վազելում:
Անա մեքենաների դարը իր բարեքներն այս-
պէս է բաժանում.—մի կողմից ընտելանքներ,
փորձամասնութիւնը, ամեն տեսակ ճորտու-
թեամբ, նուրբ բաւականութեամբ եւ վայելք-
ներով ընդարմացում. միւս կողմից հասարակ
մահկանացուները՝ մեծամասնութիւնը՝ ամեն
բաւականութիւնից զուրկ, օրական ցամաք հա-
ղի պատճառով ստիպված է չորս պատերում
փակված ծուկի եւ չորի միայն չնչի:

Բայց թէ ընտելանքներ եւ թէ հասարակ
մահկանացուները միաժամանակ թղթ են, հի-
ւանդ, ողորմելի: Երկաթուղիների, հեռագրի
եւ էլեկտրականութեան դարն անգամ չը կա-
րողացաւ մարդկային ոգու ամենամեծ հիւսն-
դութիւնը յուստեսութիւնը, արմատախիլ անել:
XIX դարի մարդը մի աշխարհայեացք, մի
հաւատք ունակութիւն արու, բայց նոր իդէալներ
ստեղծելու ոյժ ցոյց չը տուց, նրա ոգին մի
հաստատուն նեցուկ չը գտաւ. կենտրոնական
մի կէտ չունեցաւ, ուր նրա ամբողջ միաբը,
ամբողջ զգացմունքն ու կամքը միախառ-
նվէին, միւսնայի բարձրագոյն տենչանքների
զարկը հնչեցնէին. իդէալների իդէալը պա-
կասում է նրան: Այնպէս որ, նրա ոգին, եթէ
կարելի է ասել՝ կենտրոնախոյս է դարձել—նա
չէ գտնում այն բախտաւորութիւնը, որ ամեն
տեսակ բախտաւորութիւն իր մէջ է ամփոփում:
Այն խաղաղութիւնը, անվրդով հանգիստը, որի
առաջ կենքի բոլոր հակասութիւնները նսե-
մանում, խորտակվում են: Անա այս պատճա-
ռով նա պառակտման, տարբերու-
թեան, փոփոխութեան մէջն է գտնում
իր հաճոյքը. նա սիրում է կոպիտ, սուր հա-
կասութիւններ.—մի քաղցում ամենապարզին
զգայական հաճոյքների մէջն է որոնում իր
վայելքը, հետեւեալ քաղցին ամենանուրբ, հո-

գեղէն եւ եթերական ցանկութիւններ է փայ-
փայում. կենքը թուում է նրան մի քաղց գրա-
կան, իսկ միւս քաղց՝ բացասական: Եւ այս
անհանգստութիւնը, այս կենտրոնազուրկ լի-
նելը, այս անհերքաւանակութիւնը, հակասու-
թիւնները այս անվերջ ցնցը նրա ներքերը
քաղցալել, ասկն ու վրա են արել, եւ նէրաս-
տէնիան, ժամանակակից այս մեծ հիւսնդու-
թիւնը հետզհետէ ահալին ծաւալ է ստանում:

Այս բոլորը նշան է, որ մեքենայացողական
ըջմանում ենք պարունակ Այս տեսակէտից մեր
դարը կարելի է 14—15-րդ դարերի հետ հա-
մեմատել՝ երբ միջնադարեան ասպետական կար-
գերը կործանվեցին եւ նոր քաղաքացիական
դասակարգը երեւան եկաւ: Թէ այն եւ թէ
ներկայ դարաշրջանը ներքուստ հասուն էին,
իրանց գործն արդէն վերջացրել էին հին կուլ-
տուրայի հետ. մէկը յոյնած էր միջնադարեան
աշխարհայեացքից, իսկ միւսը՝ վերածնու-
թիւնից, հին ստացական իդէալները այլ եւս
չեն կարող «անցողականներին» սիրաւ բորբո-
քել, ջերմացնել, իսկ նոր իդէալները դեռ ա-
ղւտ են, անորոշ, նրանց մղելուանդ կերպով
կուտմ են անցեալի դէմ՝ առանց դեռ իրանց
պարզելու թէ ինչ է լինելու նորը:

Ինչպէս մեր դարաշրջանում, նոյնպէս եւ
14—15-րդ դարում մեծ գիւտերը ընդհանուր
յեղաշրջումներ առաջացրին մտաւոր եւ անտե-
սական աշխարհում.—ամբողջ դասակարգեր են
անհետանում եւ նորերն են երեւան գալիս: Այն
ժամանակ կուլ-իւլիսաների եւ ազնուականների,
ասպետների եւ քաղաքացիների մէջ. այժմ կա-
ռաղի պաշար բանաւորների եւ դրամատիկների,
բօրսայականների եւ կարուստատէրերի մէջ:
Ինչպէս այն ժամանակ իշխանը միանում էր
քաղաքների հետ՝ ասպետներին ճնշելու, կամ
ընդհակառակն ասպետներին հետ՝ քաղաքները

ճնշելու.—այժմ էլ բօրսային կուսակցութիւնը
բանաւորական դասակարգի հետ է միանում
մեծ կալուածատէրերին ճնշելու, եւ դրամատի-
կներն ու կարուստատէրերն միանում են բան-
ւորական դասակարգի անոյդ ոյժը խորտակելու:
Ինչպէս 14—15-րդ դարում ասպետական գե-
րիշխանութիւնը կործանվեց եւ տեղի տուեց
քաղաքացիներին՝ այնպէս էլ մեր դարում բան-
ւորական դասակարգը ահապէս ծաւալ ստա-
ցած՝ սօցիալական յեղափոխութիւններ առա-
ջացրեց եւ սպանում է դեռ նոր փոթորիկներ:
Ինչպէս գրականութիւնն այն ժամանակ ան-
հանգիստ եւ երեւուն ուղղութիւններով էր
անցնում.—այնպէս էլ այժմ՝ երբեմն իդէալիս-
տական, երբեմն բէպիստական, երբեմն նա-
տուրալիստական, երբեմն սիմբոլիզական—միա-
տիքական—անա մեր ներքալին դարակերպի
գրականութիւնը:

Եկեղեցու անկումը այն ժամանակ, կրօնի
անկումը այժմ: Իսկապէս երկու դարավերջերի
սերունդներն էլ իդէալիստներ են, բայց հիւսն-
դոտ—նստադալին, թէ ներկայ գէկագէտը եւ
թէ միջնադարեան Flagellant: Երկու գէպերում
էլ նրանք աշակերտներ՝ հետեւողներ են, բայց
ոչ վերանորոգիչներ, մարդարներ, որոնց սիր-
տը գալիք օրվայ արշալոյսով թարմանում, վե-
րակենդանանում է:

Գնահատական քաղաքացի եւ վերլուծող
միտքը մի միակողմանի եւ վտանգաւոր բռնա-
կալ է. նա բոլոր միւս ոյժերը յետ մղում, ոչնչ-
նացնում է. նա քանդում, քաղաքում է առանց
վերանորոգելու. նա պահանջում է միայն «գի-
տեսնալ» եւ XIX դարը գիտութեան ամենա-
հարուստ դարն էր. բայց գիտութիւնը իսկ դե-
չը դարձաւ այս դարում (եւ չի էլ կարող դառ-
նալ), այնպէս որ մարդը այն չէ, ինչպիսի գի-

Թիւնները թէ՛ իրանց ատուարութեամբ, թէ՛ քանակութեամբ եւ թէ՛ գեղարուեստի կողմից վրաց գրականութեան պարծանք կարելի է համարել 1893 թ. հանգուցեալի ամսուին Անաստասիա-Թումանեան Մէրէթէլի խմբագրութեամբ հրատարակուող վրաց չափաւոր թիւով «Կիւլի»-ն, որի ուղղութիւն տուողն ու գլխաւոր աշխատակիցը զարձաւ Գեորգի Մէրէթէլին։ Նրա առաջնորդները հետաքրքրուելի թիւն էին բազմաշնորհ, եւ շատերն էլ քաղաքագիտական լինելով եւ «Մշակի» մէջ 20 տարեկան արդիւնաւէտ էր նրա գործունէութիւնը վրաց հասարակութեան համար, իշխանապետականները նրան ոչ թէ միայն չէին սիրում, այլ եւ հայնչում էին, մասնաւոր զերմիւն քաղաքային ընտրութիւնների ժամանակ, երբ նա գրեց «Կիւլի» մէջ «Վրաց եւ հայոց յարաբերութիւններ» վերնագրով յայտնի յօդուածը։ Այդպիսով երեսուն տարի շարունակ գործելուց յետոյ վախճանակց յունվարի 12-ին 58 տարեկան հասակում, այն ժամանակ, երբ զեռ եւս վրացիներին շատ հարկաւոր են այնպիսի օրինակներ գործիչներ, ինչպիսին էր հանգուցեալը։

Դ. Տէր-Դաւթեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Յունվար ամսի սկիզբը հայտնաբերութեան ժամանակ է։ Անց կացում մի տարու համագումարներն են ժողովում ոչ միայն առեւտրական տները, պետական եւ հասարակական հիմնարկութիւնները, այլ եւ մարդկային կեանքը։ Այս վերջինը իր հայելու ներկայացնում է ոչ թէ բաժնետէրերի, պաշտօնեաների մի սահմանափակ շրջանին, այլ ամբողջ աշխարհին, պատմութեան, ժամանակին եւ հայելու վերաբերվում է միայն նրա հոգեկան կեանքին, ոչ ոքի համար հետաքրքրական չէ, թէ մի ժողովուրդ մի յայտնի ժամանակամիջոցի մէջ ինչպէս է ապրել իր անային, անհատական գործերը, ինչ է կերել եւ ինչ ախորժակներ է ունեցել։ Պատմութիւնը մարդուց պահանջում է ցոյց տալ, թէ ինչ է արել նա իբրեւ խելացի, բանասեր արարած, իբրեւ հասարակական կենդանի։ Եւ ահա այդ հետաքրքրութեան բաւարարութիւն տալու համար, լրագիրները, իբրեւ կեանքի ժամանակագիրներ, գումարում են մի տարվայ ընթացքում եղած փաստերը։ Ռուսաց լրագիրները համարեա մի ամբողջ շարքով զբաղված էին անցած տարվա շարժումը բարձր արձանագրելու գործով։ Խորատուղովում էք այդ հայելուներ մէջ, նկատում էք կեանքի մի մեղմ հոսանք եւ գալիս էք այն եզրակացութեան, որ մեղմ չենք շտապում։ Մեր կեանքը առաջ է թաւալում այնպիսի սովորական,

աէ, եւ գիտութեան ու բարբարոսութիւնը կարծես երբեմն ձեռք ձեռքի տուած են ընթանում։ Իդէալը եւ իրականութիւնը իբրեւ անհաշտ հակասակորդներ միմեանց դէմ են դուրս գալիս, ծաղրում, հեղուկ են իրար եւ հաւատացնում, որ մէկը տանց միւսի էլ կարող է իր ճանապարհը գտնել, իրեպիզմը արհամարհել իրականութիւնը—բաժանվել նրանից եւ բռնաժողովական երազների անգունը լըրովից, խիլ թէպիզմը կոպիտ ընազներով զեկավարված՝ ստեղծել նիւթապաշտ բարոյականութիւնը—ստանալի հարցն է մարդու առաջին եւ վերջին նպատակը։

Բայց թէպիստների ճանապարհն անգամ զէպի ամպի անապատն է անտուժ, տեխնիքական մեծ նուաճումները, որոնք կեանքի ամեն անբեւեակայելի յարմարութիւններ ստեղծելին եւ առհասարակ անտեսական մեծ յեղաշրջումներ առաջարկին—մարդկային հոգեւէ երկարատեւ հանգիստ եւ ուրախութիւն չընծայելին։ Ընդհանրապէս նոր ժամանակների կուլտուրան, որի սարդերը XVI դարումն են կազմակերպում եւ հասուն պտուղները XVIII դարում—այժմ աշխարհին օրերի է մօտեցել եւ կանգնած է մեր առաջ համարեա իբրեւ մի տերեւաթափ ծառ Պատմական այս չըջափոխութիւնը (Process) ցոյց է տալիս, որ իդէալը առհասարակ մարդկային ծագում ունի, հեռու է կատարելութեան եւ յաւիտականութեան սահմանից։ Արգարեւ ցնորքների այն աշխարհը, զէպի ուր ձգտում էր հասնել մարդկութիւնը վերածնունդից սկսած—իրականութեան մէջ այսպէս թէ այնպէս ցանկալի աշխարհը չէր, որովհետեւ մի կողմից «բաւականանալու» ծառը լրացւա յագուրդ չը ստացաւ, մի կողմից տանջանքի եւ թշուառութեան ծովը երբեք չը ցամաքեց։

Գծողն հասանքներով, որ եթէ նրանց մէջ գտնենք առաջագիտական մի փոքրիկ նշույլ, լոյսի մի հատիկ ճառագայթ անգամ, չենք կարող չը զգալ մի միլիթարութիւն, որ իրաւաւորութեան այնքան արտադիր մեր չըջապատի մէջ վերցնելով մարդկային կեանքը ամբողջովին, մենք պիտի ամենից առաջ դիմենք այն հարցին, թէ որքան առողջ է այդ կեանքը իր հիմքի մէջ։ Եւ այս հարցը մեզ տանում է դէպի ընտանիքը։ Այդտեղ է, ինչպէս գիտե՞ք, որ զրկ ճշմարիտ առաջագիտութեան սաղմը, աղբակ է եւ այն խաւարը, որ զարկից ի վեր կանգնած է մարդու լոյսը առաջագիտական ջանքերը, յատկացնելով նրան Դանայեան քուրերի ձեւաւորողը։ Այդտեղ է կենը, որի յետագիտութիւնից, ստրկութիւնից այնքան վրէժնաւորում է մարդու երջանկութիւնը։ Մենք միշտ մի ստանձին ուշադրութեամբ ենք վերաբերվել ամեն մի երեւոյթի, որ քնքշել սեռի ճակատագրի մէջ մի գեղեցիկ փոփոխութիւն, վերածնութեան մի նշան էր ցոյց տալիս։ Այս անգամ տեսնում, թէ կանանց շարժումը ինչպիսի է արել 1899 թվին Ռուսաստանում «Северный Крестер» լրագիրը յիշատակում է կանանց մի քանի ընկերութիւններ, որոնք գործում են Պետերբուրգում։ Այսպէս է, օրինակ, կանանց փոխադարձ—բարեգործական ընկերութիւնը, որի ինտելիգենտ անդամները փոխադարձ նիւթական օգնութիւն են տալիս, չը մոռանալով նաեւ հոգեկան պահանջները, ուստի եւ սարքում են դաստիարակութիւններ, զրոյցներ, երաժշտական-գրական երեկոյթներ։ Ինտելիգենտ կանայք աշխատում են օգնութեան հասնել եւ իրանց խելքն ու անօգնական, աղէտ քայքայելու եւ բաց են անում հիմնարկութիւններ, ուր խելք կանայք սովորում են արհեստներ։ Շատ համարելի է եւ մի այլ ընկերութիւն, որի նպատակն է խնամել ջահել աղջիկներին։ Նա բացել է մաշկաքաղաքի մի քանի տեղերում կիրակնօրեայ դպրոցներ։

Այդտեղ գալիս եւ բանտարոհներ, դերձակներ, ձերմակեղէն կարողներ, աղախներ, եւ ամբողջ կիրակնի անց կանայք իրենց զանազան զբաղմունքների եւ գեղարձակութիւնների մէջ։ Մի քանիները կար ու ձեռք դասեր են անում, ուրիշներն ցոյց է արելով, ինչպէս պէտք է չինել արհեստական ծաղիկներ, մի քանիներն էլ գրագիտութիւն են սովորում։ Այս դասերից անցնում են դրոյցներին, քահանայ հոգեւոր բաների մասին է խօսում, բայց դրանից մի օրէւ բան է կարգադրում պատմութիւնից, աշխարհագրութիւնից եւ ընտանի գիտութիւնից, եւ այդ ժամանակ մեղական լապտերի միջոցով պատկերներն են ցոյց արելով։

Ընկերութեան դպրոցները մեծ համակրութիւն են վայելում չորսը դասակարգի մէջ եւ ամենքը ուրախութեամբ են յաճախում։ Ընկերութեան լինելու համար պէտք է խոստովանել, որ XIX դարի ընթացքական աշխարհայեցողք իր ծայրայեղ եւ բացասական արտայայտութեան նիւթապաշտութեան հետ միտքին արտադրել եւ մի առողջ, դրական սնունդ իդէալը այն ժամանակ է միջին դարում մի հասուն եւ գեղեցիկ պտուղ, երբ իրականութեան հոգիքն է ծծում իր հիւթը։

Ահա այսպէս հազար ու մի տարակուսանքներով պաշարված՝ իդէալներից աղքատ հրաշքեւ ենք տալիս հարցերի եւ կատակների, յուսահատութեան եւ յոգնածութեան, տանջանքի եւ հաղաչանքների տաղանային մարտիվում fin de siècle-ին։ Արդեօք XX դարում բացվելու է մեզ խաղաղութեան եւ ցնծութեան աւետարան արչալոյսը, նոր կեանք, նոր արեւ։ Հարցը այս խնդրի վերաբերմամբ բաւական է։ Անհատական կեանքը, որ առաջիկայ դարը մեզ ընծայելու է՝ դա լինելու է հակադրութիւնը ներկայի. Հէգելի «հակադրութեան» սկզբունքը պատմական զարգացման ընթացքում՝ այսպէս թէ այնպէս մի անուրանալի ճշմարտութիւն է ամփոփում իր մէջ։ Եւ ըստ երեւոյթի՝ յոռետեսութեան հարցին պէտք է յաջորդէ լուսատեսութեան եւ կենսաբանութեան դարը, գիտութեան դարը՝ գիտութիւնը տարրաջնջելու, ոգիացնելու դարը, չոր եւ մոտաւոր լոյսով միայն փայլող ոգիներին՝ զգացմունքի, ոգեւորութեան եւ կրքի մարդիկ։

Ամենից առաջ XX դարը երեւի կը խնամէ եւ կը մշակէ մարդկային օգուտ այն ստեղծագործող ոյժը, որ մեր դարում ամենից շատ է թաղանթ—երեւակայութիւնը։ Խելքը, բանականութիւնը, գիտութիւնը իրանց յատուկ միակողմանիութեամբ կեանքը եւ ընտելութիւնը եթէ կարելի է ասել՝ բռնադատում են, նրանք ի-

րութիւնը ունի եւ հանրակացարան, ուր կարող են կանայք թեթեւ վճարով կարող են յարմար անկիւն եւ ճաշ ունենալ։

1899-ին հիմնվել է եւ մի շատ համակրելի մարդկային ընկերութիւն Մօսկվայում։ Դրա նպատակն է կուլեւ անառակութեան եւ դրա հետ կապված արեւոցդրութեան դէմ։

Սկզբում կանանց այդ ընկերութիւնը իր ամենամտերի գործն է համարում անարդարաւորութեան առաջն առնել եւ աղաղակ նրանից այն կանանց, որոնք կեանքի գծուար պայմանների մէջ են գրված։ Ահա ինչու Մօսկվայի ընկերութեան անդամուհիները միտադիր են սկզբից եւ եթէ հիմնել արհեստագիտական դպրոցներ, աշխատանքով օգնութիւն հասցնելու բնութ, մի գրասենեակի, որի միջոցով գործ որոնողները եւ գործ ունեցողները կարող են հարկաւոր տեղեկութիւնները ստանալ, նոյնպէս եւ աշխատում են ըստանալ իրաւունք այցելելու այն խորշերը, ուր անառակութեան դժբախտ գոները ծանր լուծի տակ են հեծում։ Տեղեկանալով ամեն մի անդուլթ վարմունքի մասին, ընկերութեան կօմիտէն կը յայտնէ իշխանութեան եւ դատ կը սկսէ բարոյականութեան կանոններ խախտողների դէմ։

Պէտք է արձանագրել եւ այն գործունէութիւնը, որ ցոյց տուին կանայք սովորականների մէջ։ Անցեալ տարի սով կար Ռուսաստանում, եւ կին-բժիշկները, ֆելդշերները, գիւղական քոյրերը գնացին օգնելու դժբախտներին։

Յաճախ գուրկ լինելով մեծ միջոցներից, բայց լի եռանդի եւ կարեկցութեան մեծ պաշարով դէպի հիւանդ եւ սոված գիւղացիներ, նրանք ոչ միայն կերակրում էին աղքատներին, այլ միշտ նոր հունձը, այլ եւ օգնելով անապառք դարձած գիւղացիներին ոտքի կանգնել, տալով նրանց գործիքներ եւ բանաւոր անասուններ։

Այժմ էլ հարաւային Ռուսաստանում կայ անբերրութիւն, այնպիսի աղքատներ, որոնք էլ կարելից արտերի կարօտ, եւ կանայք այնտեղ էլ գործում են, բայց են անուժ ճաշարաններ, խնամում են հիւանդներին։

Ահա համապատասխան փոքրիկ, համեստ բաներ են, կասէք դուք։ Այո, մանր, հազիւ նկատելի կարիքներ են դրանք, բայց միեւնոյն ժամանակ ամեն մէկը մի նշան է, որ ցոյց է տալիս, թէ կայ շարժում, հասկացվել է գործունէութեան անհրաժեշտութիւնը։ Միլիթարականը, յուսատու ապագայի կարապետը հէնց դա է։ Կը կամենայինք, որտանց կը կամենայինք անցնալ տարու վերաբերմամբ մի քանի միլիթարական փաստեր էլ հայ կնոջ մասին պատմել։ Բայց ինչ պատմենք։ Զուգահեռ, չըռայլութիւնների պատմութիւնն մենք չենք կարճում։ Դրանից դուրս մի կառուցելով մեռելութիւն էր ներկայացնում հայ կնոջ կեանքը։ Այնպիսի քաղաքի գաւառի աղէտն անգամ չը կարողացաւ միջակնել մեր տիկիներին եւ հարկադրել նրանց դուրս գալ աւանդական մեռել-

րանց բոլոր «մանաւորութիւններով» եւ «ընդհանրացումներով», «արտոններով» եւ «մեթօդներով» միանգամայն արուեստական եւս։ Այս միակողմանիութիւնը փարատելու, «իրական» անմիջապէս անհատական եւ զգալի համար հարկաւոր է կեանքի թաղմ եւ կենդանի աղբիւրի խմել եւ ոչ թէ մշուշապատ գաղափարների անկնդան բաժաններից։ (Գաղափարներն այստեղ տրամաբանական մեղով միայն պէտք է հասկանալ)։ Պէտք է դիտել, եւ այս դիտելու աւելի է քան տեսնելը, ամեն զգալ է, որ մի ամբողջ տեղեկութիւն է անկողնի լոյսն է եւ ընդարձակ քան թէ մարդկային բանականութեան միօրինակ աշխարհը։ Միայն դիտել—զգալով մենք կարող ենք բանականութեան մոպս միջոցներ, նրա պատգամների, իրական ձեւերի ու անհատների բռնակալութեան շղթաները փշրել։

Հանձարեղ կանտի ամենամեծ արժանիքը նրանումն է կայանում, որ նա թէեւ «մաքուր բանականութեան», գիտութեան սահմանները որոնք միւս կողմից, եթէ կարելի է ասել՝ դիտելութիւնը գոհաց կեանքը փրկելու համար, եւ ուրիշ կերպ չէր իր կարող լինել, որովհետեւ նա խոր կերպով ըմբռնեց, որ գիտութեան քայքայող եւ վերլուծող ոգին կոյր է եւ չէ կարող հասնել այսպէս կոչված «վերջին ճշմարտութեան»։ Եւ կանտից յետոյ XIX դարի վերջին կեսում մի հոգեւոր բնագիտութիւն «Ignorabimus»-ով եւ 7 առեղծատեղիներով կարծես գիտութեան անանկութիւնն էր յայտարարում։

Մարդկութիւնը յաւիտական տարակուսանքի եւ տանջանքի կը դատապարտվէր, եթէ չը լինէր փրկարար երեւակայութիւնը, յիշուի, երբ գիտութիւնը հարցերի եւ անզոգնածների

լուծիւնից, երեւան զալ հրապարակում իբրեւ մարդկային կարեկից սիրտ ունեցող արարածներ...

ԳԼԽԱՌՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՎԻ ՆԻՍՏԸ

Երկրաշարժի չըջանում ամենալուրջ եւ հերթական հարցերից մէկն է տնտեսի շինութեան հարցը։ Մասնաժողովը հաւաքում է տեղեկութիւններ ճարտարապետների միջոցով։ Ի միջի այլոց դիմել է Շամախու գաւառական վարչութեան, ինչպիսիք այն բոլոր նիւթերը, որոնք այնտեղ գոյութիւն ունեն նախկին երկրաշարժի առիթով ժողովում։

Այնուհետեւ մասնաժողովը լսեց ժողովրդական դպրոցների տեսուչ Պերեկովիչի գեղութեամբ վճարված դպրոցական չէնքերի եւ անգործ մնացած ուսուցիչների մասին երկրաշարժից վնասվել են 11 շինութիւն, որոնցից մի մասը գտնվում է աղէտի շրջանում, միւսը այդ շրջանից դուրս, օրինակ Կարմախ, վաւրյան եւ Էլտիա գիւղերում։ Բոլորովին անպէտք են դարձել դպրոցական չէնքերը Արագածայում, Խզարայում, Կարտիկամում, վերանորոգութեան եւ կարկատման են կարօտ չէնքերը Վալիանում, Բարակիում, Խրթիւում, Էլտիում եւ Ալաքալաքում, որտեղ վնասվել են գիւղատնտեսական ֆերմայի շինութիւններ։ Բոլոր վնասված դպրոցական շինութիւնները նորոգութեան եւ վերաշինութեան համար հարկաւոր է 32,700 ռուբլի։ Միջնորդութիւնը, տեղեկանալով երկրաշարժի աւերածութիւնների մասին՝ նշանակել է օգնութիւն 6000 ռուբլի, որ անկասկած շատ անբաւարար է։ Յիշած դպրոցների մեծ մասը պահվում է տեղական ազգաբնակչության հաշուով, ուստի եւ նրանց ապագայ պահպանութեան հոգսը պէտք է դարձաւ ծանրանայ գիւղացիների վրա։ Այն ուսուցիչները, որոնք ազատ են մնացել դպրոցական պարտաւորւնքներից, ներկայումս զբաղված են տեղական կօմիտէի համար վիճակագրական տեղեկութիւններ ժողովելով։

Մասնաժողովը, քննելով գեղութեամբ եկաւ այն եզրակացութեան, որ ներկայումս առաջին եւ անցնողագիւղի պէտք է համարել ուսուցիչներին օգնելու հարցը, իսկ դպրոցական չէնքերը կառուցանելու հարցը ապագայ կարող է զալ երբ գիւղացիների ամենաէական կենսական կարիքները հոգացված կը լինեն։ Այն ժամանակ ապագայ կը գալ եւ եկել գիւղացիների վերանորոգութեան կարեւոր հարցը։ Մտքերի փոխանակութիւնից յետոյ մասնաժողովը որոշեց, 1) վնասված գիւղերի ուսուցիչներին ընդունել տեղական կօմիտէի հովանաւորութեան տակ, տալով նրանց յանձնարարութիւններ եւ սահմանելով նախկին ուսուցիչները, 2) միւս ազատ ուսուցիչներին ունենալ ի նըկատի նրանց եւս տալու պաշտօն կօմիտէի

մոլթ ստուգներով խարխալում է, ստեղծագործող երեւակայութիւնը միշտ թարմ, միշտ ինքնավար, միշտ կենդանի՝ օգնութեան է համարում եւ ամբողջացնում է այն, ինչ կրկնում է մնացել։ Նա իր հրեղէն տեսողով նոր նուաճումներ է անում, նա իր սեփական աշխարհն է ստեղծում, որը միշտ պարզ է, լուսատու, բանականութեան սահմանափակումներից միանգամայն ազատ, նա իր ճարտարապետական թռիչքների առաջ ոչ մի «Ignorabimus» չէ ճանաչում։

Իդէալն ահա երեւակայութեան ծնունդն է, եւ մարդկութիւնը շարունակ ստեղծում է իր այս ներքին իդէալական աշխարհը՝ իրականութեան նեղ եւ ճնշող միջնորդում չը խեղդվու համար։ Այսպիսի ստեղծագործող երեւակայութիւնը օժտված ոգիները միշտ լաբված, միշտ կրկնում, միշտ գործունեայ են։ Նրանք արանում են միջին աստղերի աշխարհը մոլորակների եւ արեւի շառաւիղներով են ընթանում, բայց նրանք գիտեն եւ ջրի մի փոքրիկ կաթիլի մէջ խորատուղվել եւ այնտեղ մի ամբողջ աշխարհ գտնել, ոչ մի սահման, ոչ մի հետաւորութիւն նրանց չեն ճանաչում։

Գիտութեան չըջանի միշտ հետեւել է եւ երեւակայութեան չըջանը, եւ այս յաջորդականութիւնն անհրաժեշտ է, որովհետեւ մարդու աշխարհայեցողքը ընտելեան եւ կեանքի վերաբերմամբ նոյնպէս էլօլիցիայի մեծ օրէնքներ են։ Երեւակայութեան եւ որովհետեւ կառարկութիւնը, կեանքի բացարձակ ներդաշնակութիւնը միշտ անհասանելի է մնում—այդ պատճառով եւ երեւակայութիւնը շարունակ ստեղծագործելու, ի դէպ յաւելու աւելու աւելու է, միշտ հաւատը, միշտ ոգեւորութիւն, միշտ թարմութիւն...

Բ. Լ. Ն.

Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванкская ул., № 27.